ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈ՞ՒՆ, ԹԵ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹ

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՆԿՅՈՒՆԱՔԱՐԸ

DOI: 10.52174/2579-2989_2022.4-109

Հիմնաբառեր. *մշակույթ, տնտեսական զարգացում, սոցիալական նորմեր, տնտեսական վարքագիծ*



Տաթևիկ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՀՊՏՀ դասախոս

Գերազանցությամբ ավարտել է ՀՊՏՀ բակալավրիատը և մագիստրատուրան՝ «Միջազգային տնտեսական հարաբերություններ» մասնագիտությամբ: Այնուհետև կրթությունը շարունակել է ՀՊՏՀ «Միջազգային տնտեսական հարաբերություններ» ամբիոնի ասպիրանտուրայում: Երկու տարի աշխատել է Պեկինի բիզնեսի և տեխնոլոգիայի հասարանում՝ որպես այցելու գիտնական: Որպես փորձագետ և հետազոտող՝ աշխատել է մի շարք միջազգային կազմակերպություններում (EU4Culture, USAID, UNICEF, ILO, IMO և այլն): Այժմ աշխատում է նաև ՀՊՏՀ կարիերայի կենտրոնում: Հեղինակ և համահեղինակ է մի շարք գիտական հոդվածների:

https://orcid.org/0000-0001-6488-2717

Տնտեսական ուսմունքը ժամանակակից աշխարհում գնալով ավելի ու ավելի ներառական է դառնում՝ շոշափելով այնպիսի թեմաներ, որոնք, գուցե, ուղղակիորեն փոխկապակցված չեն տնտեսագիտության անկյունաքարերի հետ, բայց և այնպես, խորքային վերլուծության արդյունքում ակնհայտ է դառնում, որ լրջորեն են անդրադառնում տնտեսական կյանքի վրա:

Այս առումով, արդիական է տնտեսական կյանքում մշակույթի դերի վերլուծությունը՝ ըստ երկու տարբեր դիտանկյունների: Մի կողմից, առանցքային է հասկանալ, թե տնտեսական մշակույթ ունենալն ու դրա կառուցակարգերը հասարակության շրջանում կիրառելն ինչպե՞ս կարող են «վերախմբագրել» այդ հասարակությունը: Իսկ մյուս կողմից, մշակույթն ու դրա զարգացումը, որպես առանձին գործունեության օբյեկտ, ի՞նչ ազդեցություն են թողնում հասարակության բարեկեցության, կյանքի որակի բարելավման և, ընդհանուր առմամբ, տնտեսական զարգացման վրա: Այս երկու հարցերին պատասխանելով՝ հնարավորություն կունենանք ընդլայնելու մեր տնտեսական «մտահորիզոնը»՝ ուրվագծելով հասարակության զարգացման և բարեկեցության մակարդակի աճի նոր հեռանկարներ:

Նորարարական տնտեսություն ստեղծելու ճանապարհին էապես մեծանում է մշակույթի նշանակությունը, ինչը նաև անդրադառնում է երկրի տնտեսական աճի վրա՝ թելադրելով տնտեսական վարքագծի նոր մոդելներ և հասարակության շրջանում

արմատավորելով նոր պահանջներ: Ընդ որում, կարևոր է արձանագրել, որ մշակույթն այս համատեքստում դիտարկվում է ոչ միայն որպես առանձին ոլորտ, այլև տնտեսական գործընթացների կազմակերպման առանձնահատուկ ձև: Տնտեսական սուբյեկտներն այս պարագայում մշակույթի նկատմամբ դրսևորում են պահանջարկի նոր մակարդակ, տնտեսապես ավելի «գրագետ» սպառման և տնտեսական փոխհարաբերությունների նոր մոտեցումներ, որոնք էլ սահմանում են ժամանակակից տնտեսական մշակույթի բովանդակությունը՝ որպես մեկ ամբողջություն: Տնտեսական մշակույթի հիմնական նպատակն է միավորել տարբեր հասկացություններ՝ բարոյականություն և առևտրայնացում, մրցակցային պայքարի խիստ կանոններ և շուկայական փոխհարաբերությունների ակտիվ մասնակիցների գործարար վարքականոն (էթիկա): Հասարակության մեջ մշտապես տեղի են ունենում հիմնարար տնտեսական վերափոխումներ, որոնք զուգակցվում են մարդկանց տնտեսական գիտակցության փոփոխությունների հետ՝ միասին կազմելով ժամանակակից հասարակության տնտեսական մշակույթի զարգացման ընդհանուր ուղղությունը[1]:

Տնտեսական մշակույթը հասարակության տնտեսական «առողջացման» հզոր գործոն է: Տնտեսական վերափոխումները շահակիցներից պահանջում են տնտեսական նոր գիտելիքի իմացություն, որը թույլ կտա խելամտորեն ընկալել առաջացող փոփոխությունները: Հասարակության ժողովրդավարացումը, տնտեսական կառուցվածքի և կառավարման ձևերի հիմնարար փոփոխությունները խթանում են մշակութային նոր արժեքների ձևավորումը:

Բազմաթիվ գիտական հրապարակումներ հաստատում են տնտեսական մշակույթի հիմնախնդիրների ուսումնասիրման արդիականությունը և դրանց ազդեցությունը հասարակության տնտեսական զարգացման վրա[2]: Տնտեսական մշակույթը, որպես տնտեսական հարաբերությունների սուբյեկտների տնտեսական վարքագիծը կարգավորող գործընթաց, ունի որոշակի առանձնահատկություններ: Դրա ձևավորման վրա մեծապես ազդում են տնտեսության կարիքներն ու սոցիալական նորմերը, որոնք, ի հայտ գալով հասարակության շրջանում, ձեռք են բերում հատուկ նշանակություն: Այս առումով, առանձնակի կարևորություն է ստանում տնտեսական գիտակցության և տնտեսական մտածողության միջև կապի ամրապնդումը: Ընդհանուր առմամբ, եթե հասարակության շրջանում սոցիալական օրինաչափություններն ու կարծրատիպերը պահպանողական են, ապա տնտեսական վարքագիծը պասիվ է, իսկ տնտեսական մշակույթը՝ հիմնականում թույլ դրսևորված: Մյուս կողմից, արդյունավետ, ստեղծագործ ու ակտիվ սոցիալական միջավայրով երկրում ձևավորում է ազատ ու արգասավոր տնտեսական մշակույթ:

Տնտեսական մշակույթն առանձնահատուկ ոլորտ է՝ միտված մարդկանց միջև հաղորդակցության ապահովմանը, ինչպես նաև տնային տնտեսությունների փոխգործակցության հարաբերություններում գրագետ տնտեսական որոշումների ընդունմանը : Միաժամանակ, մշակութային տնտեսությունն ուղղակիորեն փոխկապված է երկրում արվեստի ու գիտության զարգացման հնարավորությունների հետ: Մշակութային կյանքի ակտիվացումը, տարբեր մշակութային միջոցառումների պարբերական կազմակերպումը, դրանցում ընդգրկված շահակիցների լայն շրջանակն առանցքային նախապայմաններ են՝ երկրի մարզերում ու համայնքներում սոցիալ-տնտեսական կյանքի ակտիվացման տեսանկյունից: Վերջինս էլ, իր հերթին, հնարավորություններ է ստեղծում երկրի մշակութային ներուժի ամբողջական բացահայտման ու վերարժևորման համար՝ ծառայելով հասարակության յուրաքանչյուր անդամի կյանքի որակի բարելավմանն ու երկրի միջազգային հանրահռչակմանը:

Կայուն մշակութային կյանքը, առաջին

[1] Gradov I.A. Virtualization of vocational education: social order, Collection of scientific works. Nizhni Novgorod, 2012. P. 4-11.
[2] Carrillo, FJ (2014). What Knowledge-based Development stands for? -A position paper, International Journal of Knowledge-Based Development 5 (4), 402-421.

հերթին, նշանակում է մշակութային ոլորտի զարգացում, ինչի շնորհիվ ակտիվանում է երկրի սոցիալ-տնտեսական կյանքը, ինչպես նաև ապահովվում է դրա շարունակականությունը: Մյուս կողմից, հաշվի առնելով բնապահպանական հիմնախնդիրներն ու դրանց առանցքային դերն ամբողջ աշխարհում, մեծ նշանակություն է ձեռք բերում մշակույթի միջոցով պատասխանատու հասարակության կերտման գործընթացը՝ ձևավորելով շրջակա միջավայրի հետ համակեցության օրինակելի վարքագիծ՝ սկսած կենցաղավարությունից՝ վերջացրած տնտեսական գործունեությամբ: Իսկ ներառական մշակութային կյանք ունենալու տեսլականը կարևորում է երկրի բոլոր համայնքներում մշակութային կյանքի հասանելիությունը յուրաքանչյուր բնակչին՝ անկախ հնարավոր մարտահրավերներից:

Մարդկության գոյության հիմնական և անփոփոխ հիմքերը, ինչպես նաև յուրաքանչյուր պետության բարգավաճման պայմանները ապահովում են մարդկային ռեսուրսի որակը: Ուստի Հայաստանում այսօր կարևոր և արդիական հիմնախնդիրներ են տնտեսական մշակույթի զարգացումն ու ձևավորումը՝ որպես ազգի բարոյական նկարագրի բաղադրիչներ: Շուկայական տնտեսության կառուցման ճանապարհին, երբ շեշտադրվում է ժողովրդավարական արժեքների ներմուծման գործընթացը, հայկական հասարակությունում ի հայտ են գալիս բազմաթիվ ու բազմաոլորտ խնդիրներ ու մարտահրավերներ, որոնք առավելապես պայմանավորված են հետխորհրդային Հայաստանից ժառանգություն մնացած տնտեսական մշակույթով և դրա վերաձևափոխման անհրաժեշտությամբ: Հայ հասարակությունն այս պահին սերունդների միջև մշակութային բախումների ամենաեռուն շրջանում է: Մի կողմից, այստեղ ակտիվ է խորհրդային իրականությունում ծնված, կրթություն ստացած ու աշխարհընկալում ձևավորած մարդկանց ստվար զանգվածը՝ որպես խորհրդային հասարակարգի տնտեսական մշակույթի, արժեհամակարգի ու գաղափարների կրող, իսկ մյուս կողմից՝ անկախությանը հաջորդած տարիներին ծնվածները, որոնք տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման նման ծավալների ու ընդգրկման պայմաններում բացարձակապես այլ՝ ազատական ու հաճախ անկանխատեսելի տնտեսական մշակույթի մոդել են ձևավորում: Ընդ որում, նախկին տնտեսական մշակույթի հերքման ու նորի ակտիվ տարածման պայմաններում սերունդների միջև առաջացել է խզում նաև տնտեսական հարաբերություններում՝ բարդացնելով համագործակցության հնարավոր հարթակների մշակման ու ապահովման գործընթացը:

Խորհրդային տնտեսական հասարակարգի փլուզմամբ պայմանավորված նոր՝ կապիտալիստական (շուկայական) գաղափարների ներմուծումն արդեն տարիներ շարունակ Հայաստանում ուղեկցվում է մի շարք սոցիալ-տնտեսական մարտահրավերներով (աղքատության և գործազրկության բարձր մակարդակ, արտագաղթ, եկամուտների անհավասարաչափ բաշխվածություն և այլն), ազգային անվտանգությանը սպառնացող գոյապահպանական խնդիրներով (մի քանի պատերազմներ, անընդհատ շարունակվող սահմանային բախումներ և այլն): Այս ամենի հետևանքով մեր հասարակությունը դեռևս չի ձևավորել տնտեսական մշակութային մոտեցման համապատասխան շրջանակ, ինչը բարդացնում է տնտեսական գործընթացներում արդյունավետ ու առողջ հարաբերությունների հաստատումը: Հայաստանում հասարակության ժողովրդավարացումը, հանրային տնտեսական կառուցվածքի և կառավարման ձևերի հիմնարար անկյունաքարերի փոփոխությունը պահանջում են մշակութային նոր արժեքների ձևավորում, ինչին էլ պետք է ուղղված լինի հայ հասարակության զարգացման տեսլականը:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Acemoglu, D & Robinson, J (2012). Why Nations Fail: The Origins of Power, Prosperity, and Poverty. New York, NY: Crown Business
2. Carrillo, FJ (2014). What Knowledge-based Development stands for? -A position paper, International Journal of Knowledge-Based Development 5 (4), 402-421.
3. Daly, L (2011). Beyond GDP: Advancing New Measures for a Strong Economy with Sustainable Growth. New Economy Transitions Meeting, Institute for Policy Studies. http://www.demos.org/sites/default/files/publications/Beyond_GDP-NextStage_Daly.pdf. Accessed 15 April, 2014.
4. Gradov I.A. Virtualization of vocational education: social order, Collection of scientific works. Nizhni Novgorod, 2012. P.4-11.
5. Krynski, A., Campechano Covarrubias, J., Mamanazarov, A., Kulishov, V. (2016). The Economic Paradigm of Educational Globalization. Periodyc naukowy Academii Polonijnej, Czestochowa, Vol. 18, 3, 11-19.

Татевик ВАРДАНЯН
Преподаватель кафедры международных экономических отношений, АГЭУ

ВИДЕНИЕ АРМЯНСКОГО ОБЩЕСТВА

КУЛЬТУРНАЯ ЭКОНОМИКА ИЛИ ЭКОНОМИЧЕСКАЯ КУЛЬТУРА? ОСНОВА РАЗВИТИЯ ОБЩЕСТВА

Экономическая теория в современном мире становится все более всеобъемлющей, затрагивая темы, которые могут и не иметь прямого отношения к краеугольным камням экономической науки, но тем не менее в результате глубокого анализа становится очевидной их отнесенность к экономической жизни. В этом смысле уместно анализировать культуру в экономической жизни с двух разных точек зрения. С одной стороны, важно понять, как наличие экономической культуры и применение ее механизмов в обществе может «перередактировать» это общество. А с другой стороны, каково влияние культуры и ее развития как отдельного объекта деятельности на благосостояние общества, повышение качества жизни и в целом на экономическое развитие? Ответы на эти два вопроса позволят расширить наш экономический «горизонт», создав новые перспективы развития общества и повышения уровня благосостояния.

Ключевые слова: *культура, экономическое развитие, социальные нормы, экономическое поведение*

Tatevik VARDANYAN
Lecturer of the Chair of International Economic Relations, ASUE

THE VISION OF THE ARMENIAN SOCIET

CULTURAL ECONOMY OR ECONOMIC CULTURE? CORNERSTONE OF SOCIETY DEVELOPMENT

Economic theory in the modern world is becoming more and more inclusive, touching on topics that may not be directly related to the cornerstones of economics, but nevertheless, as a result of deep analysis, their reference to economic life becomes obvious. In this sense, it is relevant to analyze culture in economic life from two different perspectives. On the one hand, it is important to understand how having an economic culture and applying its mechanisms in society can «re-edit» that society. And, on the other hand, what are the effects of culture and its development as a separate object of activity on the well-being of society, improving the quality of life and, in general, economic development? The answers to these two questions will make it possible to expand our economic «horizon», creating new prospects for the development of society and the increase in the level of well-being.

Key words: *culture, economic development, social norms, economic behavior*